Աղէկս Նեմթաղեայ.

Ամենայն իրք յամենայն ուրեք ժամանակ է. առձէ՝ գայ՝ հասանի յատտիս, և դարձեալ միանգամ անդրէն դադարի ։

Բայց յաղթողն կարեաց միայն ամենայնի յաղթէ. մի լինիր ամբարտաւան՝ յորժամ 'ի ցանկալի փառաւորութիւնս լցես, և մի գծուծ՝ յորժամ 'ի թշուառութի հասանիցիս. զի եթէ այսպէս զկշիռն ունիցիս, արդար կշռիչ կենաց աշխարհիս լինիցիս. քանզի ոչ 'ի պարզ, և ոչ 'ի յօդուածոյս՝ 'ի փնասակարութիւնս անկայք, այլ 'ի բազումս և յանհնարինս. և 'ի պէս պէս դառնութիւնս. և չիք ոք՝ որ այնց մխիթար լինիցի մեզ ։

Յամենայն կարծեաց բարութեանց միանգամայն վրիպեցուք յաշխարհի՝ և 'ի կենաց, և 'ի մեծութենէ. և միայն օգնական չարեաց՝ զանմտութիւն գտի ։

Եւ արդ՝ քանզի բազում վշտօք պատեցաք ով անձն՝ մի վհատիր յաշխատութիւնս. այլ համբեր յաշխատութիւնս՝ իբրեւ զաւ ինչ ածեալ զմտաւ, եթէ՝ ոչ զոր կամի ոք և խորհի՝ զայն առնէ, այլ զոր ոչն խնդրէ ոք և փախչի՝ զայն կրէ. այլ աստուածեղէն սահմանին՝ ամենայնի յաղթել խոկայ ։

Ասաց ոմն, ասաց մեզ այսպէս. Պուետիկոս գլուխ մի՝ եթէ յոյք առ կենդանեօք, անյոյք մեռանին. թէ այնպէս իցէ, պարտ է համբերել վշտաց. և սանիկ առաքինութեամբ կարեաց, զի ոչ ոք է ինչ. և չէ ինչ 'ի կեանս երկրածնաց. և ոչ ինչ 'ի նմին հաստատութեան յիրաց մարդկան կայ. այլ իբրեւ զանիւ՝ շրջի ամենայն և ընթանայ. և արդ՝ ես թախծեալ մտօք ընդ այսր ամենայնի՝ գրեմ անձամբ անձին իմում, և առ մտանդհօր իմոյ զբաղում թշուառութիւնս իմ ։

Վա՜յ է ինձ յորժամ ածեմ զմտաւ զփոփոխմունս. զամենայն ինչ մարդկան՝ իբրեւ զմարդկան տեսանեմ. և մի միայն հաւատարիմ յոյս թողլի ինձ, զԱստուածոյ և եթ մարդասիրութիւնն ։

Ալէ՛. Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր և բանիւ Տեառն երկինք հաստատեցան. և Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նորա ։

Արբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու ։ Գլ. ԺԴ. 25.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ ։

Զայս խօսեցայ ընդ ձեզ մինչ առ ձեզըս եմ. իսկ մխիթարիչն Հոգին Սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, և յիշեցուսցէ ձեզ զամենայն որ ինչ ասացի ձեզ ։

Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի խռովեսցին սիրտք ձեր, և մի զանգիտեսցեն ։

Լուայք զի ասացի ես ձեզ՝ թէ երթամ և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր՝ եթէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս ։

Եւ այժմ ասացի ձեզ մինչչեւ եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք ։

Ոչ եւս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այսորիկ, և յիս ինչ ոչ գտանէ. այլ զի ծանիցէ աշխարհ՝ եթէ սիրեմ զՀայր, և որպէս պատուիրեաց ինձ Հայրն՝ այնպէս առնեմ. ո՛ն արիք գնասցուք աստի ։

Սրբասացութիւնն Հրեշտակայինն է. Իսկ՝ յորժամ պատարագիչն հասանի յայն տեղին յորում ասէ՝ Առէք կերէք, դպիրքն երգեսցեն շարական ՃՅ. Սարաւխելի հողմոյ.

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր ա.

Երիք անգամ. զկնի՝

Եւ եւս խաղաղութեան. Օրհնութիւն և փառք.

Աղօթք՝ սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի ասացեալ 'ի սուրբ Երրորդութիւնն.

Ամենակալ անարատդ Աստուած անըսկիզբն Հայր՝ անտեսանելի, անբաւելի, անպատմելի, անպարագրելի, անփոփոխելի, անիմանալի, անհասանելի ։

Որ միայն ունիս զանմահութիւն բնակեալդ 'ի լոյս անմատոյց ։

Որ բանիւ քո արարեր զերկինս և զերկիր. զծով և զցամաք, և զամենայն որ 'ի նոսա. և Հոգւովդ քով Սրբով գոյացան եղեալքս ամենայն ։

Եւ վասն անչափ սիրոյ քոյ առ ազգս մարդկան, առաքեցեր զմիածին Որդիդ քո փրկել զմեզ յանիծիցն Ադամայ ։

Որ իջեալ յերկնից մարմնացաւ Հոգւով Սրբով՝ 'ի սուրբ և յանարատ կուսէն Մարիամայ. և զամենայն կիրս մարդկային կրեալ բաց 'ի մեղաց, ազատեաց զմեզ 'ի կրից մեղաց ։

Եւ խաչի և մահու համբերեալ յաղագս մեր, փրկեաց զմեզ 'ի ծառայութենէ սատանայի. և յերկրպագութենէ կռոց ։

Եւ ուսոյց՝ ամենասուրբ Երրորդութեանդ զգլուխ և զծունր խոնարհեցուցա-

նել, և խնդրել զթողութիւն մեղաց։

Եւ յետ յարութեանն՝ երեւեցաւ աշակերտաց իւրոց՝ զանազան նշանօք յաւուրս քառասուն, հաղորդելով ընդ նոսա հացիւ՝ 'ի հաստատութիւն կենսաբեր տնօրէնութեանն։

Եւ 'ի վերանալն յերկինս՝ 'ի քառասներորդ աւուր յարութեան իւրոյ, եդ ձեռն 'ի վերայ՝ և օրհնեաց զաշակերտսն, տալով նոցա զկատարեալ շնորհս առաքելութեան։

Եւ եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս. եւ պատուիրեաց նոցա մնալ յԵրուսաղէմ, և սպասել աստուածային խոստման աւետեացն Հօր երկնաւորի և մարդասիրի։

Դու Տէր, պարգեւեցեր ազգի մարդկան զանբաւ ողորմութեանդ շնորհս։

Առաքեցեր զէակից քո զՀոգիդ Սուրբ 'ի մեծի միաշաբաթիս. 'ի կատարման յիսներորդի աւուր յարութեան Փրկչիդ։

Յերրորդ ժամու գթացաւ Նախահայրն Ադամ 'ի Հոգւոյդ Սրբոյ՝ յոգի կենդանի՝ աստուածային փչմամբ, զոր անդէն կորուսեալ ճաշակմամբ պտղոյն, և մահացեալ։

Վերստին դարձեալ 'ի սոյն ժամու՝ կենդանաստեղծի Հոգւոյդ Սրբոյ իջմամբն 'ի դաս Առաքելոյն։

Որ 'ի հրեղէն լեզուս երեւեալ՝ նստաւ 'ի վերայ նոցա. և լցոյց զամենեսեան Հոգւովդ Սրբով՝ խօսիլ յամենայն լեզուս, և 'ի լսելիս միով ձայնիւ տպաւորելով Սուրբ Հոգւովդ։

Որ եւ առաջին ծնունդ ծնեալ զերեք հազարսն՝ յանուն Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյդ, առաջին երկրպագեցին սրբոյ Երրորդութեանդ։

Ընդ որս և մեք այսօր զծունր և զպարանոցս խոնարհեցուցանեմք, և քո Առաքելովքն աղաչեմք, ընկալ զմեր զերկրպագութիւնս ընդ նոսին. և ոյք նովին արժանաւորութեամբ խորհրդաբար երկրպագեալ քեզ մինչեւ ցայժմ։

Լուր մեզ յաւուրս յայսմիկ մեծի Պենտէկոստէիս. յորում աւուր զՀոգիդ Սուրբ 'ի ստորինս առաքեցեր յերկնից. յետ համբառնալոյ Որդւոյ քոյ Յիսուսի յերկինս. որով՝ հաւատովք կարդամք առ քեզ։

Հայեաց 'ի բարձանց 'ի սրբութենէ քումմէ 'ի ժողովուրդս քո. որ առաջի կան, և ակն ունին մեծի ողորմութե՟ քո։

Առաքեա զբարերար Հոգիդ Սուրբ այսօր 'ի տաճարս քո, և 'ի ժողովեալքս 'ի սմա, որպէս յայնժամ 'ի վերնատունն՝ 'ի յԱռաքեալսն։

Զի և 'ի սմա միածին Որդիդ քո հանապազ պատարագի. որպէս 'ի վերնատունն՝ ուր զխորհուրդն սուրբ աւանդեալ՝ բաշխեաց աշակերտացն, 'ի խորհրդական ընթրիսն. և զնոյն լուաց զոտս. և դրօքն փակելովք երեւեցաւ յառաջին միաշաբաթին՝ 'ի յարութեան երեկոյին. և դարձեալ յութերորդ աւուրն՝ 'ի վերնատանն։

Եւ 'ի կատարման Պենտէկոստէի աւուրցըն՝ իջեալ Հոգիդ Սուրբ փչմամբ հողմոյ. և ելից զնա հրով՝ հանդերձ 'ի նմա միաբանելովքն սրբովք։

Վասն որոյ փառաւորեմք զքեզ բարերար Տէր, Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և աղաչեմք զքեզ բոլորով սրտիւ։

Նայեաց 'ի մեզ քաղցրութեամբ, և յիշեա զթութեամբ եւ ողորմութեամբ քո զտառապեալքս և զդատապարտեալքս, և դարձո զգերութիւն հոգւոց մերոց ըմբռնելոց 'ի բանսարկուէն, և կանգնեա զանկեալքս և զկործանեալքս։

Աղաչեմք զքեզ մարդասէր Տէր, զի թէպէտ և մեղաք, սակայն 'ի քեզ անկաք յարգանդէ աւազանին, և դու ես Աստուած մեր։

Մի թողուր զմեզ. զի պակասեցան յունայնութեան աւուրք մեր. և եղաք նախատինք թշնամեաց, և ծաղր և այպն ատելեաց մերոց։

Այլ յուսալով յողորմութիւն քո՝ որ յաւուրս յայսմիկ եղեւ, հայցեմք 'ի քէն. բաց մեզ զդուռն ողորմութեան քոյ. և սրբեա զմեզ 'ի գաղտնեաց մերոց։

Տուր զխոնարհութիւն ծառայից քոց, և թող մեզ զամենայն յանցանս մեր ըզ-

կամայ՝ և զակամայ, զգիտութեան՝ եւ զանգիտութեան:

Շնորհեա՛ զքաւութիւն ժողովրդեան քո, և մաքրեա զամենեսեան զօրութեամբ Հոգւոյդ Սրբոյ:

Փրկեա՛ զմեզ ՚ի բռնութենէ թշնամւոյն. և ամրացո զկեանս մեր ՚ի չարահնար խաբէութենէ բանսարկուին:

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա զմեզ, որ յառաջ քան զհայցելն, ըզպէտս մեր պատրաստես:

Արժանացո՛ զմեզ նախ քան զվախճանն մեր, դառնալ առ քեզ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ:

Տաճարացո՛ զամենեսեան յընդունելութիւն Հոգւոյդ Սրբոյ, ընդ սրբոց Առաքելոցն. և ընդ նոսին գրեա՛ զանուանս մեր ՚ի դպրութիւն կենաց:

Զամենեսեան զմեզ ժողովեա յարքայութիւնդ քո՝ ՚ի վերինդ Երուսաղէմ, յերկնային բարձրագոյն վերնատունդ. զի քոյ է ողորմութիւն. եւ քեզ փառս վեր առաքեսցուք և միածնիդ քո Որդւոյ և Ամենասուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հայր երկնաւոր. շարական ԺԷ. Այսօր երկնայինքն.

Աղօթք հանդերձ ծունր. (որպէս ՚ի վերոյ):

Դարձեալ աղօթք.

Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ որ զքո խաղաղութիւնդ շնորհեցեր սրբոց քոց Առաքելոցն՝ փչմամբ ՚ի նոսա. և զՀոգիդ յայտնապէս այսօր պարգեւեցեր նոցա. որ եկեալ ՚ի Հօրէ բնակեցաւ ՚ի նոսա, եւ զտրտմութիւն նոցա մխիթարեաց. և հրեղէն լեզուօք՝ ՚ի լեզուս նոցա հանգուցեալ, եբաց զբերանս նոցա խօսիլ յամենայն լեզուս:

Եւ զամենայն մարդիկ՝ որ յաշտարակէն բաժանեալ էին, ՚ի բազմաստուած մոլորութենէն՝ միաւորեաց ՚ի մի աստուածգիտութիւն ճշմարիտ երեք անձնական զօրութեանդ. յամենայն լեզուս զմի Աստուած փառաւորել ուսոյց՝ աւետարանին քարոզութեամբն ընդ ամենայն տիեզերս, և նմին միայնոյ զծունր խոնարհեցուցանել. որպէս երեք հազարքն նորածնեալք յայսմ աւուր մկրտութեամբ:

Ընդ որս և մեք նովին Հոգւով լուսաւորեալք՝ հաւատով զծունր խոնարհեցուցանեմք սրբոյ Երրորդութեանդ, և աղաչեմք միաբան ժողովեալքս:

Նայեա՛ յիս յանարժանս, որ զաղօթս ժողովրդեանս քոյ՝ քեզ մատուցանեմ առաջի սրբոյ սեղանոյ քոյ:

Բա՛ց Տէր զիմ մեղաւորիս շրթունս, որպէս զբերանն Առաքելոցն. և լցո՛ Հոգւովդ՝ հաղորդիլ ամենայն շնորհաց ՚ի քէն տուելոց ընտրելոց քոց:

Եւ մի վասն բազում մեղաց իմոց արգելցես զողորմութիւն քո յինէն. որ յուսով կամ առաջի քոյ, և հայցեմ յանբաւելի գթութենէդ:

Արժանի՛ արա զծառայս քո աստուածային պարգեւացդ. իմաստութեան, և հանճարոյ. խորհրդոյ, և զօրութեան. գիտութեան, և աստուածպաշտութեան. և Հոգւով երկիւղի քոյ՝ լցո զիմ միտս, և սիրտ սուրբ՝ և հոգի ուղիղ՝ և զմիտ մաքուր նորոգեա ՚ի մեզ:

Որ նաւելոց նաւահանգիստ ես, ուղղեա զընացս իմ ՚ի ճանապարհ անբիծ, խորհիլ միշտ յօրէնս քո. պահել զպատուիրանս քո. առնել զհրամանս քո. քարոզել զբանս քո. երկրպագել Հօր՝ Հոգւով և ճշմարտութեամբ, եւ աղօթել Հոգւով եւ մտօք յանուն քո՝ ըստ անսուտ բանին զոր ասացեր, եթէ զոր ինչ խնդրիցէք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ՝ տացի ձեզ:

Յոր խոստումն, և ես մեղաւորս յուսալով աղաչեմ զտուողդ բարեաց և ողորմութեանց. որ շնորհես առաւել քան զոր ինչ խնդրեմք և իմանամք, կատարել ՚ի բարի զաղօթս մեր:

Որ զախտացեալ բնութիւնս մեր. յանախտ աստուածութիւնդ քո միացուցեր. և նովին կարեաց մերոց կցորդեցար, և զախտ մեր բժշկեցեր:

Լո՛ւր մեզ Աստուած փրկիչ մեր. խոնարհեցո զունկն քո յերկրպագութիւն

ժողովելոյս 'ի սուրբ Եկեղեցի քո՝ ըստ նմանութեան քոյոյ ընտրելոցն՝ 'ի սուրբ վերնատանն։

Սրբեա՛ զոսա յամենայն պղծութենէ մեղաց. և առաքեա զՀոգիդ Սուրբ 'ի միաբան հաւատացեալքս, զի բնակեսցի 'ի մեզ. և լուսաւորեսցէ լուսով աստուածգիտութեան. և աւաջնորդեսցէ մեզ ամենայն ճշմարտութեամբ 'ի պահպանութիւն պատուիրանաց քոց։

Եւ ամենագէտ արասցէ՝ աստուածային պատուիրանացն, զոր խօսեցան մարգարէքն և Աւաքեալքն և վարդապետքն՝ 'ի ձեռն Հոգւոյն Սրբոյ. զի ուսուցանէ և զօրացուցանէ առնել զամենայն։

Աղաչեմ զքեզ Տէր, մի վասն բազում մեղաց իմոց՝ արդելցես զՀայցուածս սոցա. զի քո են փրկեալք, և առ քեզ ըղձեռս համբառնան. և խնդրեն զՀաշտութիւն։

Այդ ընկալ զծնրադրութիւն մաղթանաց սոցա՝ որպէս զնոր լուսաւորելոցն. և զհամբարձումն ձեռաց սոցա՝ որպէս զպստարարդ երեկոյի. և զաղօթս սոցա՝ որպէս զխունկ անոյշ՝ առաջի բարերար թագաւորիդ. և ընդ հովանեաւ թևոց քոց ծածկեա զոսա՝ պահելով յերեւելի և յաներեւոյթ թշնամեաց։

Որպէս զի անպատ քրիստոնէութեամբ կացցուք յայսմ՝ աշխարհիս, և արժանի լիցուք երկնային կենացդ ընդ ամենայն սուրբս քո. և գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Որդի Աստուծոյ։ Շարական դէ. Որ 'ի վերայ բղխեալ։

Աղօթք հանդերձ ծունր. (որպէս 'ի վերայ)։

Դարձեալ աղօթք։

Որ եսդ Տէր՝ Տէր զօրութեանց և Աստուած ճշմարիտ, աղբիւր լուսոյ և կենաց՝ բղխեալ անքննաբար 'ի Հօրէ, հրաշագործ Սուրբ Հոգիդ։

Զոր խոստացաւ սրբոց Առաքելոցն Քրիստոս Աստուած մեր. որ մահուամբ ըզկապանս մահու ելոյծ, և զսկիզբն մեղաց՝ փակեաց 'ի հուրն անշէջ և 'ի խաւարն արտաքին՝ անլոյծ կապանօք. անդ ամրափակեալ զպիղծ վիշապն՝ նորին ապըստամբ զօրութեամբն։

Եւ զարդեալեալ հոգիսն որ յԱդամայ՝ վերածեաց իւրով յարութեամբ, և վերացաւ առ Հայր՝ մերով բնութեամբս հանդերձ։

Եւ 'ի լրումն ամենայն խորհրդոց, զքեզ նորոգող և կենդանարար Սուրբ Հոգիդ՝ առաքեաց մխիթարիչ տրոմեցելոցս։

Որ խոնարհեցար Աստուած յԱստուծոյ հօրէ, և եկիր 'ի վերնատունն անտանելիդ երկնից. լցուցեր անճառելի խնդութեամբ և շնորհօք զքո ընտրեալսն՝ զորս առաքեցեր քարոզս բանին կենաց ընդ ամենայն երկիր։

Որք լցին զտիեզերս ամենայն գիտութեամբ քո Տէր. և ծանուցին զմի աստուածութիւն քո՝ աշխարհի, բառնալով զկռոցն զնոտի պաշտօնն։

Ծնան սուրբ աւազանաւն զՀեթանոս յորդեգրութիւն Հօրդ երկնաւորի. եւ արարին զամենեսին երկրպագուս ամենասուրբ Երրորդութեանդ։

Յամենայն տեղիս եդին հիմունս սրբոց Եկեղեցւոյ. և հաստատեցին տեղան փառաց քոց, յորմէ կերակրեցին անմահական խորհրդովն զամենայն հաւատացեալս 'ի քեզ։

Զերկիրս՝ երկին արարեալ. երկնայնոցն զերկրայինս դասակցեցին։

Եւ արդ՝ Տէր Աստուած մեր ողորմած և մարդասէր, ընկալ զպաղատանս մեր զոր հայցեմք 'ի քէն, և հանգո զՀոգիս ծառայից քոց՝ ննջեցելոց մերոց. որք և լուսաւորեալք հոգեւոր ծննդեամբն՝ քրիստոնեայ անուան արժանաւորեցան հաղորդութեամբ աստուածային մարմնոյ և արեանն. հաւատով և ուղիղ դաւանութեամբ փոխեցան յաշխարհէս. զորոց և զյիշատակն կատարեցաք այսօր յուսով փրկական պատարագիս՝ յաւուր երեւման քո։

Տէր ամենակալ, Աստուած մահկանացուաց և անմահից՝ արարիչ ամենայնի. և 'ի հանդերձելումն՝ յոյս ամենայն ծա-

գաց երկրի։

Որ 'ի վերջին աւուրս տօնի մեծի Պենտէկոստէիս, զուարճացուցեր փառաւոր գալստեամբ քո 'ի վերնատունն՝ ըզ-ժողովեալսն յանուն քո։

Լուր և այժմ ձայնի աղաչանաց մերոց, և յիշեա զյառաջագոյն ննջեցեալսն, և հանգո 'ի տեղւոջ լուսոյ՝ 'ի խորանս արքոց քոց։

Յիշեա զաղօթս և զպաղատանս նոցա, և զխոստովանութիւն՝ 'ի կեանս եւ 'ի վախճանի. և թողութիւն շնորհեա ամենայն յանցանաց նոցա. և արժանացո սպասել հատուցման՝ հանդերձեալ փառացն, զոր պատրաստեցեր սիրելեաց քոց. և ընդ նոսին օրհնել զամենասուրբ զերրորդութիւնդ։

Եւ մեզ ժողովելոցս 'ի տաճար քո՝ երկրպագուացս և տօնողացս զօր ամենակեցոյց գալստեանն քո, շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ՝ և զնորոգումն հոգւոց և մարմնոց 'ի հնութենէ մեղաց. ծնանիլ զմեզ վերստին ապաշխարութեամբ՝ եւ արտասւօք, եւ զորացո ըզգաստութեամբ եւ արդարութեամբ ընդ սրբոց առաքելոցն՝ 'ի բնակութիւն քեզ. զի մի լիցի 'ի մեզ տեղի՝ և մուտ չարի։

Սրբեա՛ զչրթունս ծառայից քոց, և ըզլեզուս՝ լեզուօքն հրեղինօք։

Ընդ հոգևորսն՝ հոգևոր օրհնութեամբ օրհնել, և սաղմոս ասել, և աղօթել յամենայն ժամ. սուրբ սրտիւ և հաստատուն հաւատով և խոնարհ հոգւով զբանաւոր պատարագս քեզ մատուցանել. և 'ի խորոց սրտէ արտասուալից պաղատանօք՝ խնդրել 'ի քէն զքաւութիւն։

Եւ զամենայն զկեանս մեր՝ պարսպեա յերկիւղ քո 'ի չարին խորհրդոց, 'ի բանից և 'ի գործոց։

Եւ արժանի արա՛ զմեզ 'ի հաճոյս քո կեալ, և ըստ կամաց քոց կատարել ըզկեանս մեր ճշմարիտ խոստովանութեամբ, և ջերմեռանդ ղջմամբ, և փրկական խորհրդոյն հաղորդութեամբ։ Քահանայական յուղարկմամբ, նուիրօք և պատարագօք յիշատակիլ առաջի սրբոյ սեղանոյ քոյ։

Հանապազ առաջի անկեալ աղաչեմք զմարդասէր Սուրբ Հոգիդ, զի և զհոգւոց մերոց գնացս 'ի մարմնական կենացըս՝ պահեսցես աներկիւղ անցանել, և փրկիլ յօդային պիղծ այսոցն, առաջնորդելով յերկիր ուղիղ՝ և 'ի կեանն արդարոց. ուր հոգիք սրբոցն՝ ուրախութեամբ օրհնեն զքեզ։

Եւ 'ի միւսանգամ նորոգմանն՝ 'ի գալըստեան Փրկչիդ, զարթուցանել զամենեսեան 'ի ձայն փողոյ. յորժամ ստանաս յարութեամբ զամենայն մարդիկ, և նորոգես իւրաքանչիւր հոգւով։

Ի սպառնալեաց գեհենին՝ և յանիերելի տանջանացն զերծուսցես. և խառնեսցես 'ի բանակս սրբոց քոց՝ ընդ սիրելիս անուան քոյ, լինել ժառանգաւոր երկնից արքայութեանդ։

Եւ մեք բանաւոր հօտս՝ և հաւատացեալքս 'ի քեզ, օրհնեսցուք և փառաւորեսցուք զամենասուրբ զերրորդութիւնդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ 'ի վճարին, Հոգի Աստուծոյ. և այլն ըստ կարգին։

Իսկ յերեկոյին Ի. ժամուն, ժողովեցին յԵկեղեցին։

Սաղմոս՝ ՃԽԲ.

Հոգիքս Սուրբ և բարի՝ առաջնորդեսցէ ինձ 'ի յեր.

Ընթերցուածս 'ի Գործոց առաքելոց.
Գլ. Բ. 1.

Եւ 'ի կատարիլ աւուրցն Պենտէկոստէից՝ էին ամենեքեան միաբան 'ի միասին։

Եւ եղեւ յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հողմոյ. և ելից զամենայն տունն յորում նստէին։

Եւ երեւեցան նոցա բաժանեալ լեզուք իբրեւ 'ի հրոյ. և նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա։

Եւ լցան ամենեքեան Հոգւով Սրբով, և սկսան խօսել յայլ լեզուս՝ որպէս եւ Հոգին տայր բարբառել նոցա։

Եւ էին յերուսաղէմ բնակեալք Հրեայք,